ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-167[4]-30.11.2017-ՊԻՄԻ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի փետրվարի 18-ի թիվ ՀՕ-41-Ն օրենքի 88-րդ հոդվածի 1.1-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 1-ից:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընդունված վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող կարգի համաձայն:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Կ-167-24.10.2017-ՊԻՄԻ-011/1 և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Կ-167[3]-24.10.2017-ՊԻՄԻ-011/1 ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծերի փաթեթ	Առաջարկվում է Վարչական դատավարության օրենսգրքի 29.1-րդ գլուխը ճանաչել ուժը կորցրած, համապատասխան փոփոխություններ կատարել նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքներում՝ նախատեսելով, որ Հանրային իրավական դրամական պահանջները բոլոր դեպքերում կատարվեն անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ ԴԱՀԿ մարմնի կողմից՝ առանց վարչական մարմնի կողմից գումարի բռնագանձման պահանջով դատարան դիմելու, միևնույն ժամանակ պահպանելով վարչական ակտի հասցեատիրոջ կողմից նշված ակտերը վարչական կամ դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը:	Նախագծերի փաթեթը լրամշակվել է: Նախագծերի փաթեթը լրացվել է «Վարչարարության հիմունքների եվ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով	Ընդունվել է: